

Հաստատում եմ



Երևանի պետական համալսարանի
հումանիտար և հասարակագիտական
մասնագիտությունների գծով
արդուելուր՝ հ.գ.թ., դոցենտ Է. Ասրիյան

Ասրիյան

ԿԱՐԾԻՔ

Կարեն Սեղրակի Թոխարյանի «Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությունը և պատմամշակութային նշանակությունը» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի 2020 թ. նոյեմբերի 24-ին կայացած նիստում, որին մասնակցում էին ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտներ Մ. Գաբրիելյանը, Ա. Գնունին, պ.գ.թ. Հ. Հարությունյանը, քննարկվեց Կարեն Սեղրակի Թոխարյանի «Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությունը և պատմամշակութային նշանակությունը» «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը:

Ելույթ ունեցան ամբիոնի վարիչ Հ. Ավետիսյանը, դասախոսներ Ռ. Նահապետյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Գնունին, Հ. Հարությունյանը:

Կարեն Թոխարյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից պատմագիտության ամենակնճող և վիճելի ասպարեզներից մեկի՝ ժայռապատկերների ուսումնափրությանը: Թեման առավել արդիական է, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները. ա. նշված հուշարձանների կարևոր պատմական սկզբնաղբյուր հանդիսանալը, բ. տիպաբանության և ժամանակագրման հետ կապված բազմաթիվ բարդ խնդիրների առկայությունը, գ. ժայռապատկերների հզոր գիտահանաշողական ներուժ պարունակելը:

Ներկայացված աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որտեղ հազորդաբար դիտարկվում են Հայաստանի ժայռապատկերները, հնաստղագիտական հուշարձանները, ժայռապատկերների հետազոտությունից ստացված գիտելիքի կիրառումը պատմագիտական և մշակութաբանական խնդիրներում, եզրակացություններից, գրականության ցանկից (գիրք I), ինչպես նաև հավելվածներից, որտեղ ներկայացված են ժայռապատկերների 5 քարտեզները և ցանկերը, միջավայրը և ուղեկցող նյութը, լուսարսային իմաստակրությամբ անունների ցանկը և 199 աղյուսակները (գիրք II):

Ներածությունում հեղինակն անդրադառնում է թեմայի արդիականությանը, աշխատանքի նպատակներին ու խնդիրներին, ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմաններին, հիմնահարցի ուսումնասիրության աստիճանին, սահմանում է ուսումնասիրության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, նշում է աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը, հետազոտության փորձանցումը, ինչպես նաև ներկայացնում է մատենագրական աղբյուրների և գրականության տեսությունը:

Թեմայի արդիականության մասին հատվածում հեղինակը հիմնավորում է ժայռապատկերների, որպես պատմական սկզբնաղբյուր ուսումնասիրության կարևորությունը, ինչպես նաև դրանց ժամանակագրման և տիպաբանման հետ կապված խնդիրները: Այնուհետև ներկայացնում է աշխատանքի նպատակն ու խնդիրները, որպես հիմնական հարցադրում ունենալով առկա աղբյուրների հիմամբ բացահայտել ժայռափորագրման ոլորտի ձևավորման նախադրյալները, զարգացման սկզբունքները և օրինաչափությունները: Հեղինակի կողմից դրված հիմնական խնդիրներն են ա. պատմաքննական անդրադարձ կատարել ժայռապատկերների ներկայացմանը միջնադարյան մատենագրության մեջ և նոր շրջանում դրանց մի մասի բնութագրումը աստղագիտական իմաստի և կիրառելիության չափանիշներով, բ. ժայռապատկերների ոլորտում պատմագիտական պարզաբանումներ կատարելը:

Ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն են՝ Հայաստանում ժայռագրության սկզբնավորումից /Ք.ա. VII հազ./ ընդհուպ մինչև միջնադար: Այնուհետև ներկայացված են հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը, փուլերը և հետազոտության աղբյուրագիտական ու մեթոդաբանական հիմքը: Աշխատանքը պարունակում է զգալի գիտական նորույթ: այստեղ ներկայացված է Հայկական լեռնաշխարհի և հարա-

կից շրջանների ժայռապատկերների շտեմարան, որն ընդգրկում է ավելի քան 4000 ժայռապատկեր: Բացի այդ, հեղինակը զիտական շրջանառության է մտցրել գրեթե 3500 ժայռապատկեր և մոտ երկու տասնյակ ծիսապաշտամունքային և երկնադիտական օբյեկտ: Հեղինակի կողմից որոշակիացվել են ժայռապատկերների տեսակները, ներկայացվել ավելի քան 350 հատկանիշ ընդգրկող բնութագրական սանդղակ: Նախաբանի ավարտական մասում շարադրված է մատենագրական աղբյուրների և գրականության տեսությունը:

Աստենախոսության առաջին գլուխը կոչվում է «Հայաստանի ժայռապատկերները»: Այն ամենածավալունն է աշխատության մեջ և ներկայացնում է ինքնուրույն արժեք:

Առաջին ենթագլուխում ժայռապատկերներն արժնորվում են որպես պատմամշակութային սկզբնաղբյուր: Ժայռապատկերը կարող է դիտարկվել նաև որպես զրի նախատիպ, հանդիսանալով իբրև «առասպել քարի մեջ», և այս կերպ նրանք հնարավորություն են ընձեռում վերակազմել հնագույն հավատալիքները:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է ժայռապատկերների ուսումնասիրության հիմնախնդիրներին և ժայռապատկերների դասակարգմանը: Հեղինակը միավորում է ժայռապատկերները բնորոշող հատկանիշները յոթ խմբում. ա. ժայռապատկերը որպես հնագիտական միավոր, բ. քարարեկորը, գ. պատկերակիր մակերեսը, դ. պատկերը կազմող ակոսը, ե. բուն պատկերները, զ. պատկերների խմբայնությունը, է. միջավայրը: Հեղինակի հաշվարկներով, նշված դասակարգումը պետք է ընդգրկի մոտ 12000 ժայռապատկեր:

Երրորդ ենթագլուխը նվիրված է ժայռապատկերների ուսումնասիրության պատմությանը, որը ներկայացվում է հավելվածի 93 աղյուսակներում:

Չորրորդ ենթագլուխը նվիրված է ժայռապատկերների տիպաբանական բնութագրմանը: Հեղինակը նախ և առաջ դիտարկում է ժայռապատկերների տեղադրությունը: Հետաքրքիր է դիտարկումն առ այն, որ Հայկական լեռնաշխարհից դուրս ժայռապատկերների բաշխման խտությունը զգալիորեն նվազում է: Հեղինակին հաջողվել է դասդասել ժայռապատկերներն ըստ տեղադրման բացարձակ բարձրության: Աշխատանքում անդրադարձ է արվում նաև դրանց կերտման ժամանակաշրջանին: Դիտարկվում է միջավայրը և ուղեկցող նյութը: Զափազանց կարևոր է հեղինակի այն նկատառումը, թե ժայռապատկերը սերտ է շրջակա միջավայրին, որի համապատկերում էլ ձևավորվում է մարդաստեղծ սրբազն լանդշաֆտը: Այս ենթատեսատում էլ դիտարկվում են տեղը և տեղանքի բնույթը՝ էկոլոգիական վիճակը, բնական վիճակը՝ գեղագիտական բնապատ-

կերը, կոթողայնությունը, մերձակա հնագիտական տարրերը և միավորները, ուղեկցող հնագիտական նյութը և այլն, մոտակա ժամանակակից արհեստական կողմնորոշիչ տարրը, պատկերվածի համապատասխանությունն այդ ուղղությամբ երևացող իրողություններին: Այնուհետև հեղինակը քննության է առնում հիմնական երկու՝ պատկերային և ոչ պատկերային տեսակները, դասղասելով դրանք, ըստ տեղեկատու հետքի տեսակի (փորագիր և նկարեն), ըստ պահպանման վիճակի, ըստ ակոսի ձևավորման եղանակի (բրածեծ, խորաքանդակ, հղկանկար, փայլանկար, շերտահատ, լցանկար, քերծանկար, խառը), ըստ պատկերագրման չափի, ըստ պատկերակիր մակերեսի տեղադրության, ըստ պատկերակիր մակերևույթի ձևի, ըստ պատկերատարբերի ընդհանուր քանակի, ըստ քարաքեկորի պատկերակիր նիստերի թվի, ըստ ուսումնասիրության ֆիզիկական մատչելիության, ըստ տարածական իրականացման եղանակի, ըստ խմբայնության: Հեղինակը նշում է, որ Հայաստանում առկա է նշված տասը տեսակների և վիճակների մեծագույն մասը, թեպետ, առայժմ հայտնի չեն դասական գետնանկարի օրինակ:

Հինգերորդ ծավալուն ենթագլխում ներկայացվում է ժայռապատկերների բովանդակությունը քննություն, մարդու առօրյա, արարման արդյունք, ներաշխարհ, որոնցում հեղինակն առանձնացնում է 31 խումբ: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ անզամ մեկ ժայռապատկերի հորինվածքում, այս խմբերը հաճախ միահյուսված են՝ համալրելով միմյանց: Բովանդակային խմբերի պատկերների և ոճերի մեծ մասը հարատևել է հայ մշակույթի մյուս ոլորտներում՝ խեցեղեն, քանդակ, որմնանկար, տարազ, հյուսածո իրեր:

Վեցերորդ ենթագլխում նկարագրված է ժայռանկարի պատկերառը և կատարման կերպը: Հեղինակը առանձնացնում է պատկերառի 11 տեսակ՝ սովորական, պատկերագրական հաստատունով, իրապաշտական, սխեմային, երկեռանկյուն, այլազրում, շարժուն, չափազանցված, երկակի արտապատկեր, հեռանկար և համայնապատկեր: Ժայռանկարներն ըստ կատարման կերպի բաժանվում են չորս խմբի՝ ակոսային, բազմանիստ, շրջափորագիր, շարժապատկեր: Կարևոր նորույթ է հեղինակի կողմից նշված ժայռապատկերի կատարման փուլայնությունը՝ նախանկար, անավարտ պատկեր, կրկնանկար, վրանկար և տեխնիկապես անկատար:

Յոթերորդ ենթագլխում քննարկվում է ժայռապատկերների առնչությունը հայ մշակույթի մյուս ոլորտներին: Հեղինակը գտնում է, որ ժայռապատկերների կերտման վաղ և միջին փուլերում՝ Ք.ա. VII-IV հազ., իմաստաբանությամբ և ձևառձական քննութագրով

Ժայռապատկերները համադրելի են նեռլիթի և էնեռլիթի կառուցողական արվեստի կոթողների, կենցաղային, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշների, իսկ Ք.ա. III-II հազ. բրոնզե գտածոների և հմայական իրերի հետ: Ք.ա. II-I հազ. ժայռապատկերների որոշ իմաստակիր տարրեր վերարտադրվել են բրոնզե գոտիների, թիթեղի, կնիքի և դրամի պատկերագրության մեջ: Որոշ ժայռապատկերների դեպքում համադրումներ են արված նաև ազգագրական նյութերի հետ:

Ութերորդ եզրափակիչ ենթագլուխը բնութագրում է Հայաստանի ժայռարվեստը համաշխարհայինի համապատկերում: Հեղինակը նշում է, որ Վերոնշյալ 31 խմբերի և 17 տեսակների մի մասը այլ վայրերում բացակայում է:

Ատենախոսության երկրորդ՝ «Հնաստղագիտական հուշարձաններ» գլխում ներկայացված են հեղինակի կարծիքով աստղագիտական իմաստ ու գործառույթ ունեցող հուշարձանները:

Առաջին ենթագլուխը նվիրված է աստղագիտական բովանդակությամբ ժայռապատկերներին: Հեղինակը նշում է, որ դրանցում առկա են լուսատուների տարատեսակ պատկերներ (Արև, Լուսին, մոլորակ, աստղ, համաստեղություն, Կենդանաշրջան, Ծիր Կաթին), երկնային երևույթներ (խավարում, ասուայ, գիսավոր), Երկրագունդ, մթնոլորտային երևույթներ: Կան տարբեր հիմքերով օրացույցներ, նաև՝ զաղափարագրեր:

Երկրորդ ենթագլխում ներկայացված է հնաստղագիտական մտքի արտացոլումը կառուցվածքներում: Նկատի առնելով, որ բնակեցված այրերի մեծ մասի մուտքը լուսահայաց է, նշում է տիպական մի օրինակ, այն, որ Պաղաղբյուրի անձավախորշի արևելահայաց պատի բազմատարր ժայռանկարը լրիվ լուսավորվում է միայն ցերեկը: Այնուհետև հեղինակը դիտարկում է նաև քարե կոթողները և շարքերը:

Երրորդ ենթագլուխը վերաբերում է տիեզերաբանական պատկերացումների արտացոլմանը՝ ժայռապատկերմանն առնչակից մշակութային ոլորտներում: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ տիեզերական մարմինների և երևույթների մոտիվներն ու թեմատիկան արտացոլվել են ուզմի և կենցաղային իրերում և այլն:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «Ժայռապատկերաբանական զիտելիքի կիրառումը պատմագիտական և մշակութաբանական խնդիրներում»:

Առաջին ենթագլխում ներկայացված են ժայռապատկերաբանության ձևավորումը Հայաստանում և վաղմիջնադարյան շրջանում ժայռափորագրմանն առնչվող մատենագրական տեղեկությունները:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է ժայռապատկերների թվազրման խնդրին: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ փորագրի թվազրմանը նպաստում են նկարի պատկերազրման՝ ոճաբանական և տիպաբանական առումով համեմատությունը հնագիտական և ազգագրական նյութերի հետ:

Երրորդ ենթագլխում նկարազրված են ժայռապատկերների բացարձակ թվազրման աստղագիտական երկու եղանակները: Հեղինակը քննության է առնում Վարդենյաց լեռնանցքի և Սևսարի ժայռապատկերները: Այսուհետև ներկայացվում է աստղագիտական մեթոդների պատմամշակութային նշանակությունը:

Չորրորդ ենթագլխում շարադրված են օրացույցի տեսության և Հայոց տոմարի որոշ պարզաբանումներ, ընդգծելով մեր ժամանակաշափ համակարգերի տեղածին լինելը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հինգերորդ ենթագլուխը որտեղ քննարկվում են ժայռապատկերները և հնադարյան արվեստի ծագման խնդիրները: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ նախնադարի մտածողությունը, հնագույն գիտելիքն ու ժայռարվեստը միավորված են գիտության և արվեստի ընդհանուր դրույթներով և հասկացություններով: Հեղինակը զնահատում է ժայռապատկերը որպես մարդկային ձանաչողության ընթացքի լուսաբանման կարևոր տեղեկատվական աղբյուր, «պատկերագիր խոսք»՝ զրքային մշակույթին բնորոշ հատկանիշներով:

Եզրակացություններ բաժնում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները:

Աշխատանքում օգտագործվել է հարուստ աղբյուրագիտական և մասնագիտական գրականություն, ինչը թույլ է տվել հեղինակին կատարելու խորքային լուրջ ուսումնասիրություն: Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջների համաձայն, համապատասխանում է ատենախոսության ընդհանուր բովանդակությանը, իսկ հեղինակի 15 գիտական հրապարակումներն արտացոլում են հիմնական գիտական արդյունքները:

Նշված անկասկած առավելությունների հետ մեկտեղ, ներկայացված աշխատությունում առկա են որոշ թերացումներ, որոնք անխուսափելի են նշված բարդ հիմնախնդիրների ուսումնասիրության դեպքում և բնավ չեն նսեմացնում կատարված հսկայածավալ աշխատանքի նշանակությունը:

Ա. Աշխատանքում առկա են անհարկի կրկնություններ: Մասնավորապես, թեմայի ուսումնասիրության պատմությունը մանրամասն ներկայացված է ինչպես ներածական հատվածում, այնպես էլ առաջին և երրորդ գլուխներում:

Բ. Մենհիբների համակառույցների՝ միայն աստղագիտական տեսանկյունից դիտարկումն օրինաչափ չէ, մանավանդ, Զորացքարերի համակառույցի պարագայում:

Գ. Բավարար չափով չեն լուսաբանված ժայռապատկերների այլ գործառույթները:

Կարեն Սեղրակի Թոխաթյանի «Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությունը և պատմամշակութային նշանակությունը» թեկնածուական ատենախոսությունը արդիական է, ներկայացնում է զիտական և գիտա-գործնական նորույթ և կարևոր ներդրում է հանդիսանում աղբյուրագիտության և հայագիտության ոլորտում: Այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի հեղինակն արժանի է իր հայցած Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի 2020 թ. նոյեմբերի 24-ի նիստում /արձանագրություն № 11/:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հ.Գ. Ավետիսյան 

Պ.գ.դ., պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի

գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ

Լ.Ս. Հովսեփյան



11.12.2020